

ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԸ 27 ՏԱՐԵԿԱՆ Է

Պարույր ՍԵՎԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ քաղցրանուն,
Իմ բարձրանուն,
Իմ տառապանք,
Իմ փառապանք:
Հմեղի մեջ՝ դու ալեհեր,
Նորերի մեջ՝ նոր ու ջահել.
Դու՝ խաղողի խնամարկած վազ,
Վշտերը՝ ջուր, իմքը՝ ավազ.
Դու՝ բարդենի սաղարթաշատ,
Առուն ի վար փռված փշատ.
Դու՝ կիսավեր ամրոց ու բերդ,
Մագաղաթյա մատյանի թերթ.
Դու՝ Ձվարթնոց - ավեր տաճար,
Կոնիտասյան Ծիրանի ծառ.
Դու՝ ջրաղաց խորունկ ծորուն,
Դու՝ հորովել անուշ ծորուն,
Փայլ գութանի արծաթ խոփի.
Դու՝ նետ, նիզակ, մկունդ կոպիտ,
Դու՝ հայրենի ծխանի ծուխ,
Դու՝ անգիր վեպ, դու՝ Սասնա ծռն...

Իմ փառապանք
Իմ տառապանք,
Իմ բարձրանուն,
Իմ քաղցրանուն:
Դու՝ մրգերի շտեմարան,
Ոսկեվազյան գինու մառան.
Դու՝ թավշե դեղձ, դու՝ փրփուր հաց,
Արտաշատյան խաղող սևաչ.
Դու՝ Սևանի վառվող կոհակ,
Երևանի սյուն ու խոյակ.
Դու՝ հանգրվան, կանչող փարոս,
Դու՝ հայկական գերբ ու դրոշ.
Խոսուն վկա կոտորածի
Ու վճիտ աչք ցամքած լացի,
Արդարության ահեղ ատյան,
Սրի պատյան,
Սիրո մատյան-
Միշտ հիմն ու նոր իմ Հայաստան:



ՀՀ ԳԱԱ-ում նշվեց Վիկտոր Համբարձումյանի ծննդյան և Հայաստանում աստղագիտության օրը



Վիկտոր Համբարձումյանը (1908-1996) XX դարի խոշորագույն գիտնականներից մեկն էր: Նա հիմնարար ներդրում ունի աստղագիտության և աստղաֆիզիկայի, տիեզերածնության, տեսական ֆիզիկայի, մաթեմատիկայի և փիլիսոփայության ամենատարբեր ոլորտներում:

Բյուրականի աստղադիտարանից մանրամասնում են, Համբարձումյանն ավելի քան 700 հոդվածների և 20-ից ավելի գրքերի հեղինակ է: Առավել

հայտնի է տարրական մասնիկների ֆիզիկայի, մոլորակային միգրացիոնությունների տեսության, աստղային դինամիկայի, Գալակտիկայի տարիքի որոշման, ճառագայթման տեղափոխման տեսության, աստղասփյուռների, ակտիվ գալակտիկական միջուկների, գերխիտ աստղերի, բռնկվող և այլ անկայուն աստղերի վերաբերյալ կատարած աշխատանքներով և հայտնագործություններով: Նա մասնակցություն ունի կազմակերպիչ էր, կարևոր քաղաքական և հասարակական գործիչ:

Նա հիմնադրել և ղեկավարել է Բյուրականի

աստղադիտարանը 1946-1988թթ., եղել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ 1947-1993թթ., Միջազգային աստղագիտական միության (ՄԱՄ) պրեզիդենտ 1961-1964թթ. և Գիտական միությունների միջազգային խորհրդի պրեզիդենտ 1968-1972թթ.:

Համբարձումյանը ԽՍՀՄ և ՀՀ ազգային հերոս էր, 28 ակադեմիկոսների անդամ, 7 համալսարանների պատվավոր դոկտոր, արժանացել է բազմաթիվ պետական և գիտական մրցանակների, շքանշանների և մեդալների:

2018 թ. սեպտեմբերի 10-17-ը ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ Վ. Ա. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը Բյուրականում անցկացրին «VI միջազգային աստղագիտական դպրոց» միջազգային գիտաժողով:



Գերհագեցած և չափազանց ակտիվ կյանքից հեռացավ խոշոր գիտնական, պետական գործիչ, փիլիսոփա, մանկավարժ, նկարիչ և պարզապես հայրենասեր Սերգեյ Ալեքսանդրի Զամբարծումյանը:

Նրա՝ դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկայի բնագավառի գիտական աշխատանքները լայն ճանաչում ունեն և նշանակալի ներդրում են համաշխարհային գիտության զանգվածում: Նրա աշխատանքները բարձրանված են աշ-



Ակադեմիկոս Սերգեյ Զամբարծումյանի «սև քառակուսին»

խարհի բազմաթիվ լեզուներով և վաղուց արդեն դարձել են դասական:

Նրա կողմից ստեղծվել է ամիգոտորոպ շերտավոր թաղանթների տեսություն, որի հիման վրա լուծվել են հույժ կարևոր խնդիրներ թռչող սարքերի և բարակապատ կառուցվածքների հաշվարկների և նախագծման վերաբերյալ: Սերգեյ Զամբարծումյանի կողմից առաջարկվել են սալերի և թաղանթների ճշգրտված տեսություններ: Գիտական հաջորդ նոր ուղղությունը կապված է Սերգեյ Զամբարծումյանի կողմից առաջարկված տարամոդուլ նյութերի առաձգականության տեսության հետ: Ակադեմիկոս Զամբարծումյանի և նրա աշակերտների կողմից առաջին անգամ մշակվեց բարակ մարմինների մագնիսաառաձգականության տեսությունը: Հիմնարար մեծ նշանակություն ունեն Ս. Զամբարծումյանի կողմից ստացված արդյունքները դեֆորմացվող մարմնի ոչ գծային, ջերմային և այլ հույժ կարևոր խնդիրների լուծման բնագավառներում:

ԽՍՀՄ-ի ոչ ևս լինելուց հետո, դարաբաղյան շարժման սկզբից նա ակտիվ պայքար էր մղում Արցախի անկախության համար: Լավ հիշում ենք նրա ճշմարիտ և համարձակ ելույթը ԽՍՀՄ գերագույն խորհրդի նիստում, երբ քննադատում էր ԽՍՀՄ-ի ղեկավարությանը:

Զամբարծումյանի կյանքի կարգախոսն էր. ապրիր այնպես, կարծես այս պահը քո կյանքի վերջին ակնթարթն է, բայց մի մոռացիր, որ առջևում հարյուր տարի էլ կա: Նա գտնում էր, որ մեզ տրված ժամանակը լիովին բավական է սիրո, ստեղծագործության և մեծ գործերի համար, և իր ապրած կյանքը դրա ապացույցն էր:

Սերգեյ Զամբարծումյանը ծնվել է 1922 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի) իրավաբանի ընտանիքում: Հայրը բռնադատվել էր 1937 թ: Սերգեյ Զամբարծումյանի անունն է կրում Գյումրիի փողոցներից մեկը:

1942 թ. ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը:

1946 թ. նա ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի, իսկ 1952 թ. Մոսկվայում պաշտպանելով դոկտորական ատենախոսություն տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1953 թ. պրոֆեսոր է, 1956 թ. ընտրվել է Հայաստանի ԳԱ թղթակից անդամ, իսկ 1965 թ. ակադեմիկոս: 1955 թ. աշխատել է ԳԱ նոր կազմավորված մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում, սկզբում որպես մեխանիկայի սեկտորի վարիչ, իսկ 1959 թ., տակավին երիտասարդ հասակում՝ ինստիտուտի տնօրեն: 14 տարի եղել է Երևանի պետական համալսարանի ռեկտոր: 30 տարի եղել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ:

Ակադեմիկոս Սերգեյ Զամբարծումյանը «Սև քառակուսին» կտավի իր մեկնաբանությունն ունի, և նա, շարունակելով Մալևիչի թեման, ցավ-քառակուսու շուրջը վառ գույների խաղ է պատկերում, որոնց խենթ փարթաճությունն արտացոլում է մեր անցյալում ժողովրդի կենսահաստատ ուժը և ապրելու կամքը, որ միտված է ապագային: Կյանքի վառ գույները թափանցում-անցնում են քառակուսու միջով, և թվում է, թե այն փոքրացել է, թե մի քիչ էլ ու կտավը կլցվի կյանքի գույներով, և ցավը կխեղդվի մոխիրից ու խավարից վերածնված հավերժական ժողովրդի կյանքի պայծառ գույների մեջ, իսկ նրա անհատնում ցավը վերջապես կվերածվի աննշմար մի սև կետի, որ կա յուրաքանչյուր հայ մարդու սրտում, և միշտ կհիշեցնի նրան աշակրջության և այն մասին, որ Աստծո կողմից իր ժողովրդի համար նախասահմանված առաքելությունը դեռ չի ավարտվել:

Սերգեյ Զամբարծումյան մարդու հիշատակը վառ կմնա սերունդների հիշողության մեջ և ճիշտ կլինի ավարտել իր իսկ խոսքով՝ գնալուց ճրագը չհանգցնեք...

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական
գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտ

Գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակին ընդառաջ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան այս տարի մշտնադրման 75-ամյակը, որի հոբելյանական միջոցառումները տեղի կունենան հոկտեմբերի 17-18-ը: Մի շարք կազմակերպչական հարցերի և առաջիկա անելիքների շուրջ ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Զարությունյանն աշխատանքային հանդիպում է ունեցել ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի գլխավորած պատվիրակության հետ: Նշվել է, վերոնշյալ աշխատանքները հավուր պատշաճի կազմակերպելու նպատակով կծավորվի համաժողով, որը կղեկավարի ԿԳ նախարարը: Վերջինիս ներկայացվել է միջոցառումների նախնական օրակարգը, համաձայն որի նախատեսվում է հանդիսավոր հոբելյանական միստ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, ընդունելություն համրապետության ղեկավարության կողմից և այլն:

Արտասահմանից ժամանած հյուրերը՝ բազմաթիվ երկրների գիտությունների ակադեմիաների և առաջատար գիտահետազոտական կենտրոնների պատվիրակություններ, կքննարկեն ՀՀ ԳԱԱ և արտերկրի ակադեմիաների ու գիտական կենտրոնների միջև համագործակցության խնդիրներ, ինչպես նաև կայացվեն նորարարական կրթական և մշակութային կենտրոններ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև հոկտեմբերի 15-16-ը Երևանում կայանալիք ԱՊՀ երկրների գիտնականների ֆորումի կազմակերպչական հարցեր:

Հանդիպման ավարտին Ռադիկ Մարտիրոսյանը բարձր է գնահատել ՀՀ կրթության և գիտության նախարարության և Բարձագույն որակավորման կոմիտեի հետ իրականացվող աշխատանքները՝ ընդգծելով, որ ակադեմիան բավարարված է այդ համագործակցության արդյունքներով:



ԲՈԿ-ի նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ-ում կազմակերպվեց քննարկում

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ հանդիպում ԲՈԿ-ի նորանշանակ նախագահ Սմբատ Գոգյանի և ՀՀ ԳԱԱ ղեկավարության, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների անդամների, գիտական հանրության ներկայացուցիչների միջև: Հանդիպման սկզբում ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և ներկայից շնորհավորեցին Սմբատ Գոգյանին ԲՈԿ-ի նախագահի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ:

Սմբատ Գոգյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ ԳԱԱ նախագահությանը՝ քննարկումը հյուրընկալելու համար և նշեց, որ 2005 թվականից ի վեր հպարտությամբ աշխատել է ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում: Այնուհետև նա ներկայացրեց գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհուրդներում տիրող իրավիճակը: Խոսք գնաց մասնագետների տարիքի, ընդդիմախոսների անպատասխանատու վերաբերմունքի, ամսագրերի կողմից մեկ ժամում գրախոսություն կազմակերպելու և այլ մտահոգիչ երևույթների մասին:

Հանդիպման բոլոր մասնակիցներն էլ համաձայնեցին, որ պետք է քայլեր կատարվեն իրավիճակը փոխելու համար: Սմբատ Գոգյանը հայտա-

րարեց աշխատանքային խմբերի ստեղծման մասին և գիտնականներին հրավիրեց ընդգրկվել իրենց նախասիրած խմբում: 4 խմբերից յուրաքանչյուրում գրանցվեցին 8-10 գիտնականներ: ԲՈԿ-ը կհամակարգի այդ խմբերի աշխատանքները: Նախատեսվում է, որ երկու ամսվա ընթացքում խմբերը հանդես կգան կոնկրետ առաջարկություններով և դրանց շուրջ կկազմակերպվեն քննարկումներ: ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն առաջարկեց տարվա վերջում ևս մեկ անգամ հանդիպել և ամփոփել աշխատանքների արդյունքները:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ հիմնական նպատակն է ունենալ բարձր որակավորում ունեցող կադրեր և համապատասխան մակարդակի ատենախոսություններ:

Վերջում Սմբատ Գոգյանը նշեց, որ ԲՈԿ-ը մինչ այժմ իր ունեցած ոստիկանական կեցվածքից անցնելու է բժշկական կեցվածքի և օգնելու է ԲՈԴ-երի և գիտական հիմնարկների գիտական ներուժի բարձրացմանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն



(Սկիզբը նախորդ համարում)

Նրա մահվան լուրը կայծակնահար թռավ գաղութի գաղութ, քաղաքից քաղաք՝ հայ և օտար պարբերականներով, պաշտոնական ու սովորական հեռագրերով, նամակներով, հեռաձայնով: Տարագիր հայությունը երբեք այսպիսի ցավ ու տագնապ չէր ապրել: Անդրանիկի մահը մեկ անգամ ևս վկայեց, որ նրա անունը դարձել է համազգային, համահայկական անուն: Երբ անհայտաբերվեց խորհրդանիշ: Այդ եմ վկայում նաև հարյուրավոր այն ցավակցական հեռագրերը, որոնք հղվում էին աշխարհի բոլոր ծայրերից՝ ուղղված Անդրանիկի այրուն՝ Նվարդին: Հեռագրեր էին ստացվում նաև օտարազգի քաղաքացիներից ու պաշտոնական անձանցից: Նշանավոր հայագետ Արշակ Չոպանյանի հեռագիրը Փարիզից այդ անձնի խտացումը կարծես լինելով: «Ամբողջ ազգ մը ձեզ հետ կը ողբայ իր մեկ հատիկ Անդրանիկը»: Այո, Անդրանիկի պես անհատը ընդամենը մեկը կարող էր լինել յուրաքանչյուր ազգի համար:

Անվանի նտավորական, բանաստեղծ Վահան Թեքեյանը թերթերից մեկում արձանագրեց հետևյալը: «Անդրանիկը մեռած չէ և երբեք չի մեռնելու: Նա մնալու է հավերժ՝ իբրև կեանքի ներշնչող ու ոգեւորող



Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց



գտնվող ստալինյան վարչակարգը որևէ կերպ չարձագանքեց հայ մեծանուն զորավարի մահվան լուրին և բնականաբար չէր արտոնելու նրա հուղարկավորությունը խորհրդային Հայաստանում:

Անդրանիկի մյուս փափագը՝ թաղվել Մշո Առաքելոց վանքում, ևս չէր կարող իրականություն դառնալ, քանի որ Արևմտյան Հայաստանում այլևս գերի էր թուրքական բիրտ լծին: Ջորավարի հուղարկավորությունը կայացավ 1927 թ. հոկտեմբերի 7-ին, Ֆրեզոյի «Արարատ» գերեզմանատանը: Սփյուռքահայությունը բոլոր կարելիությունները գործի էր դրել, որպեսզի ազգային մեծ հերոսի թաղումը տեղի ունենա պատվի և արժանապատվության բոլոր չափանիշներով: Սգո թափորին մասնակից էին շուրջ 15.000 հայեր և օտարազգիներ: Թափորի հետևից շարժվում էր շուրջ 1500 ավտոմեքենա: Նրա նախկին զինվորները պատվով պահակ էին կանգնել ամբողջ արարողության ընթացքում: Ձինվորական նվազախումբը հնչեցնում էր Շոպենի մահերգի մեղեդիները: Ջորավարի մահվան կապակցությամբ բազմամարդ սգահանդեսներ կատարվեցին հայահոծ քաղաքներում՝ Նյու Յորքում, Լիոնում, Չիկագոյում, Բուխարեստում, Փարիզում, Լոս Անջելեսում, Կահիրեում, Կալկաթայում, Բոստոնում, Մարսելում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆիլիպեյում և այլուր:

ներկայությունը»:

Անտարակույս էր, որ մահը լույս ֆիզիկապես է ընդհատել Անդրանիկի ներկայությունը, սակայն հոգևոր ու բարոյական չափումներով նա շարունակելու էր լինել հայության մեջ և հայության կողքին: Կահիրեում լույս տեսնող «Հուսաբեր» թերթում անվանի գրականագետ, համրային գործիչ Նիկոլ Աղբալյանը գրում էր, որ Անդրանիկը անիշխանական խառնվածք ուներ և ընթուստ էր ամեն իշխանության դեմ՝ լինելով հայրենի թե օտար, քանզի նա հնազանդվում էր ոչ թե իրավունքին, այլ բարոյական հեղինակության:

Հայ զորավարի հիշատակին բազմաթիվ հոդվածներ և այլալոկ նյութեր լույս տեսան նաև օտարերկրյա՝ բուլղարական, հունական, ֆրանսիական, բրիտանական պարբերականներում: Ջորավարի մահվան արձագանքեց նաև թուրքական մամուլը՝ իհարկե, չարականորեն ու չարախինդ կերպով: Թուրքական «Սոն Սաաթ» թերթը այդ առիթով հետևյալ կերպ էր արձագանքում: «Այս հողերի վրա այլևս ոչ մի Անդրանիկ չպիտի ծնվի, եթե ծնվի էլ չպիտի մեծանա, եթե մեծանա՝ չպիտի լեռ բարձրանա, եթե լեռ էլ բարձրանա՝ չպիտի կարողանա սուրը քաշել, եթե քաշի՝ իր կուրծքը մխելով անձնասպան լինելու համար միայն պիտի քաշի»:

Որքան հեռատես ու ճշմարիտ էր Ջորավար Անդրանիկը, երբ մահվանից ժամեր առաջ դիմելով տիկնոջը բացականչել էր. «Նուարդ, մահուանս համար չեմ ցավիր, կը ցավիմ, թե որքան ուրախ պիտի ըլլան թուրքերը: Այս, եթե անգամ մըն ալ պատեհութիւն ունենայի...Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց...»:

Անդրանիկը կնոջը նաև հետևյալն էր պատգամել. «Մարմինս օտար հողի վրա չթողու... Անպայման Հայաստան փոխադրեք: Եթե գիս հայրենիք չընդունին, գոնե ձեռքիս ցուցամատը կտրել կուտաս և հոն կդրկես, տեղ մը թող թաղեն: Այս մատս շատ աշխատած է հայրենիքի համար և շատ հոգնած է: Թող հայրենի հողին մէջ հանգստանայ: Իսկ եթե ատ ալ մերժուի և կարելի չըլլայ փափագս իրագործել, մարմինս Պուլկարիա՝ Վառնա տարեք և թաղեցեք քրոջս՝ Նազելիի գերեզմանին քով»:

Խորհրդային Միությունում իշխանության ղեկին

ԱԿԱՆԱԿՈՐ ՎԻՐԱԲՈՒՅԺԸ

(Ռազմիկ Աբրահամյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

Օգոստոսի 24-ին լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի տնօրեն, բժշկական համալսարանի մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 2 ամբիոնի վարիչ, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մասնագետ Ռազմիկ Աբրահամյանի 75-ամյակը:



Ակադեմիկոս Ռ. Ա. Աբրահամյանը մի շարք գիտական միավորումների պատվավոր անդամ է, «Մանկաբարձություն, գինեկոլոգիա և նեոնատոլոգիա» ամսագրի գլխավոր խմբագիր, Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների և նեոնատոլոգների ասոցիացիայի նախագահ, ավելի քան 435 գիտական աշխատանքների, 8 մենագրության և 5 դասագրքի հեղինակ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են տասնյակ դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ:

Գերազանցությամբ ավարտելով Երևանի պետական բժշկական ինստիտուտը՝ կարճ ժամանակահատված աշխատել է որպես մարզային բժիշկ, ինչից հետո ուսումը շարունակել արդեն Մոսկվայում՝ ակադեմիկոս Ա. Ս. Պերսիանինովի ղեկավարությամբ: Այնուհետև Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը: Այդ ժամանակահատվածում Ռ. Ա. Աբրահամյանն արդեն հասցրել էր մի շարք նվաճումներ ունենալ մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ծառայության կազմակերպման գործում, ստեղծել գիտագործնական և կադրային բազա:

Ակադեմիկոս Ռ. Ա. Աբրահամյանն ականավոր վիրաբույժ է: Նա կյանքի պահպանմանն ուղղված արտակարգ և ատիպիկ ուղղումների, կայծակնային և արագ իրավիճակային վերլուծությունների վարպետ է, առողջապահության փայլուն կազմակերպիչ:

1998 թ.-ից մինչ օրս Ռ. Ա. Աբրահամյանը հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգը, Մանկաբարձ-գինեկոլոգների և նեոնատոլոգների ասոցիացիայի նախագահը:

Ակադեմիկոս Ռ. Ա. Աբրահամյանը ստեղծել է վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտը, որը հայտնի է ոչ միայն մեր երկրում: Արդեն 90-ականների սկզբին ինստիտուտում սկսեց գործել ՀՀ-ում առաջին արտամարմնային բեղմնավորման լաբորատորիան: Սա առաջին լուրջ փորձն էր վերարտադրողական խնդիրների և, որպես արդյունք, ժողովրդագրական խնդիրների լուծման ասպարեզում:

1990 թ. Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանում իր կողմից ստեղծված մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 2 ամբիոնն ակտիվ գիտակրթական գործունեություն է իրականացնում:

Հատկանշական է, որ ստացած բոլոր պատվավոր կոչումներից և մրցանակներից Ռ. Ա. Աբրահամյանն առավել հպարտ է «Հանրապետության վաստակավոր բժիշկ» կոչումով:

2000թ.-ին գիտական ձեռքբերումների համար ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան ընտրեց Ռ. Ա. Աբրահամյանին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 2014 թ.-ին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Ցանկանում ենք հատկապես նշել, որ Ռ. Ա. Աբրահամյանի ամբողջ գործունեության ընթացքում մեծ դեր է կատարել նրա ընտանիքը, որն իր զգալի ներդրումն ունի մեր հանրապետության պրակտիկ բժշկության զարգացման մեջ:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը և բնական գիտությունների բաժանումըը շնորհավորում են Ռազմիկ Աբրահամյանի հոբելյանը, ցանկանալով նրան առողջություն, երջանկություն և նորանոր հաջողություններ:


Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ռուբեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, հրապարակագիր



«Լեզուն, որով գրում եմ, անգլերեն է, միջավայրը, որ նկարագրում եմ, ամերիկյան է, բայց ոգին, որ ինձ մղում է գրելու՝ հայկական է: Ուրեմն ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին»:

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

«ՈՒՐ ՈՐ ԿԵՐԹԱՍ, ՊՈՌԱ ՀԱՅԱՍՏԱՆ»

Վիլյամ Սարոյանը համաշխարհային գրականության բացառիկ երևույթներից է: Բացառիկ՝ ոչ իր հզոր տաղանդով-բազում են հզոր տաղանդները համաշխարհային գրականության մեջ: Բացառիկ՝ ոչ իր շեշտված ինքնատիպությամբ-ամեն մի ճշմարիտ տաղանդ արդեն իսկ ինքնատիպություն է ենթադրում: Բացառիկ՝ ոչ իսկ իր ստեղծագործություններում ապրող անչափելի ու անպարագիծ բարության-բոլոր ճշմարիտ գրողներն, ի վերջո, բարության ջատագովներ ու սերմանողներ են:

Սարոյանը բացառիկ ու զարմանալի է բոլորովին այլ իմաստով. լինելով ամերիկյան գրող, նա, իմ խորին համոզմամբ, միաժամանակ հայ ազգային գրող է: Այդպիսի երևույթ համաշխարհային գրականության մեջ գոնե ինձ ծանոթ չէ: Սարոյանի բացառիկությունն այն է, որ **գերաճելով իր միջավայրից ու իր որդեգրած լեզվից, դարձավ նաև իր հարազատ ժողովրդի ազգային գրողներից մեկը: Եվ դա ամենից առաջ հենց ինքը՝ Սարոյանն է հասկացել և ձևակերպել շատ սեղծ ու դիպուկ. «Թեև գրում եմ անգլերեն և ծնունդով ամերիկացի եմ, բայց ինձ համարում եմ հայ գրող»:**

Ինչո՞ւ, ի՞նչ պատճառաբանությամբ, ինչի՞ վրա հենվելով է, որ նա իր գրական գործունեության հենց սկզբին արել է շատերի համար անհասկանալի ու վիճելի այդ հայտարարությունը: 2Է՞ որ գրողի այս կամ այն գրականությանը պատկանելը ամենից առաջ որոշում է այն լե-

զուն, որով նա գրում է:

Բայց տեղնուտեղը Սարոյանը բացատրել ու պատճառաբանել է իր հայտարարությունը: Այդ պատճառաբանությունը խորն է ու հիմնավոր. «Լեզուն, որով գրում եմ, անգլերեն է, միջավայրը, որ նկարագրում եմ, ամերիկյան է, բայց ոգին, որ ինձ մղում է գրելու՝ հայկական է: Ուրեմն ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին»:

Այսպիսով, Սարոյանը գրականության մեջ կարևորագույնը ոգին է համարում և երիցս ճշմարիտ է, որովհետև գրականությունը, առհասարակ արվեստը, ամենից առաջ ոգի է և այդ ոգուց բխած կենսափիլիսոփայություն:

Իսկ Սարոյանի ստեղծագործությունների ոգին ստուգապես հայկական է, նրանից բխող կենսափիլիսոփայությունը հայ ժողովրդի դժվարին ճակատագրով դարերի ընթացքում ձևավորված, զտված ու բյուրեղացած կենսափիլիսոփայությունն է:

Եվ դա նկատել, արձանագրել ու շեշտել ենք ոչ միայն մենք՝ հայերս, այլև ուրիշները: Ըստ այլազգի բննադատների՝ Սարոյանը, նրա կյանքը, գրվածքների թեմաներն

փայլությամբ, որ նրա խոսքը XX դարի դարի խաչմերուկներում հնչեց եզակիորեն տեղին ու ժամանակին, հարուցելով իրեն արժանի հիացմունք ու արձագանք:

Սարոյանի մանկությունն ու պատանեկությունն անցան այնպես միջավայրում, որն ի վիճակի էր արյան հիշողությանը գունարել կենսական հարուստ հյուրեր ու նաև ծանր կենսափորձ:

Նախ ընտանիքը. դարասկզբին հայրենի Բիթլիսը թողած ու այդ հեռավոր ափերը նետված նահապետական այդ ընտանիքը թարմ ու անխաթար էր պահել հայրենի երկրի վարքն ու բարքը, կենցաղը, ավանդները, բառն ու բանը, գրույցները: Սարոյանի հոգում առանձնապես մեծ հետք է թողել տատը՝ Լուսինթաղ Ղարոջլանյանը. «Իմ մեծ մայր,- պատմում էր Սարոյանը,- Ամերիկայի մեջ ալ Բիթլիս կապրեր: Ան առանձին Աստված ուներ, կրոն չէր գիտեր, ամոր Աստված ուրիշ էր, ան ամենն շատ մարդու խելքին ու գութին կիավատար ու չէր վիատիր ու չէր հուսահատիր»:

Երեմական, պատկառելի Սարոյանը մանկան հիացմունքով ու խանդաղատանքով էր պատմում հոր՝ Արմե-

նակ Սարոյանի մասին.

«Իմ հայր բանաստեղծ էր,- ասում է նա:- Ես ամոր չեմ հիշեր, չորս տարու մանչ էի, երբ մեռավ: Երբ մեծցա ու պատկերին նայեցա՝ բանաստեղծ էր...»:

Սարոյանի վկայությամբ իր մանկության ու պատանեկության տարիներին Ֆրեզնոյն կիսով չափ հայկական քաղաք էր: Բիթլիսի, Վանի, Մշո, Խարբերդի խոսքն ու գրույցն էր ամենուր, փողոցներում, բակերում, սրճարաններում: «Ջարդեն փախած հայեր պզտիկ ուրախություններու վրա անանկ կխնդային, անանկ կպոռային, որ ամբողջ փողոց, ամբողջ թաղ կբռնե: Տեղացիներ կզարմանային, կնեղվեին, է՛, մեզի ինչ, մենք կխնդայինք, կպոռայինք...»

Չայ իր բոլոր դժբախտություններու մեջ կատակ կսիրե, կոմիկը կսիրե, որովհետև լավատես է...»

Սարոյանը մանկուց է շփվել այդ մարդկանց հետ, սիրել է նրանց, հասունանալով խորամուխ է եղել նրանց եության, նրանց կենսափիլիսոփայության մեջ, հայտնաբերել այնտեղ հոգևոր մեծ ու ստույգ արժեքներ, կեցության պարզ, բայց իմաստուն ու կայուն օրենքներ և ժառանգել դրանք:

Տարիների հետ հոգեկան այդ ժառանգությանը նա գունարել է մի այլ մեծ արժեք՝ մարդկային քաղաքակրթության ստեղծած հարստությունը:

(Շարունակելի)

ԱՎԵՏԻՍ

Բացվել է Վիլյամ Սարոյանի տուն-թանգարանը

Օգոստոսի 31-ը Վիլյամ Սարոյանի ծննդյան 110 ամյակն էր: Այդ օրը ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնո քաղաքում տեղի ունեցավ Վիլյամ Սարոյանի տուն-թանգարանի՝ «Սարոյան Հաուսի» բացումը: Բացման արա-

րողությանը ներկա են եղել Ֆրեզնոյի քաղաքային խորհրդի անդամ Էսմերալդա Սորիան, քաղաքապետ Լի Բրանդը, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Գրիգոր Հովհաննիսյանը, «Ռեմեսանս» հիմնադրամի հիմնադիր Արթուր Ջանիբեկյանը և այլք:

Տուն-թանգարանի պաշտոնական բացումից մեկ օր առաջ Ֆրեզնոյի քաղաքային խորհրդի նախագահը հրապարակեց քաղաքապետարանի հատուկ որոշումը՝ օգոստոսի 31-ը հռչակել Վիլյամ Սարոյանի օր:

Այդ տանը գրողը ապրել է իր կյանքի վերջին 17 տարիներին: Գրողի մահից՝ 1981 թվականից տունը 3 սեփականատեր է փոխել, իսկ 2015-ին աճուրդի հանվել: Հենց այդ ժամանակ էլ Արթուր Ջանիբեկյանի ստեղծած «Ռեմեսանս» մշակութային և ինտելեկտուալ հիմնադրամը ձեռք բերեց տունը և վերակառուցեց որպես տուն-

թանգարան: Այնուհետև հիմնադրամը աշխատանքներ ձեռնարկեց Սարոյանի պատկանող և առնչվող իրերը՝ նամակներ, ֆիլմեր, ծայնագրություններ, գրքեր, լուսանկարներ, գունանկարներ, գրաֆիկական աշխատանքներ թանգարանում հավաքագրելու համար:

«Սարոյան Հաուս» նախագիծը ստեղծել է սարոյանական ամենամեծ թվայնացված արխիվը և դեռ շարունակում է հավաքագրական աշխատանքները: Տուն-թանգարանը հարուստ է նորարարական լուծումներով: Թանգարանի մի հատվածում կարելի է տեսնել տունն այնպիսին ինչպիսին եղել է Սարոյանի կենդանության օրոք՝ Սարոյանի գրասեղանը, տպիչ մեքենան, գրապահարանը: Եվ այդ սենյակում քայլում է հենց ինքը՝ Սարոյանը. այցելուները հնարավորություն են ստանում տեսնել Սարոյանի 3D հոլոգրամը ու լսել նրա ձայնը: Հոլոգրամը շրջում է սենյակում, խոսում, մոտենում իր սեղանին:

Տան մյուս հատվածում Սարոյանի՝ երկար տարիների ընթացքում արված լուսանկարներն են, տեսանյութերն ու հարցազրույցները, նրա կողմից արված նկարները, նրա գրքերի պաստառները: Ամբողջ նյութը թանգարանում ներկայացված է տեխնոլոգիական ինտերակտիվ լուծումներով:

Աշխարհահռչակ գրողի տունը, որ արտաքինապես ոչնչով չի տարբերվում քաղամասի մյուս տներից, այժմ բաց է հանրության համար երեքշաբթից կիրակի 10-ից 6-ը: Մուտքն ազատ է, բայց քանի որ թանգարանը միառժամանակ սահմանափակ քանակի այցելուներ կարող է ընդունել, այցելությունից առաջ անհրաժեշտ է նախապես գրանցվել: Տուն-թանգարանը մշակութային օջախ կդառնա ոչ միայն հայության, այլև ողջ աշխարհի համար: Կազմակերպվելու են գրական երեկոներ, փառատոներ և մշակութային այլ միջոցառումներ:

William Saroyan House Museum

31 august 2018

The opening ceremony of the William Saroyan House Museum

6.30pm


Register to attend / saroyanhouse.com

Free Register

Satellite Student Union
Fresno State 2576 E San Ramon Ave Fresno, CA



Խաչատրյանական հյուրընկալ ու արվեստառատ օջախը քառասուն տարեկան է



Մեծերին գնահատելու, նրանց ստեղծած արվեստն ու մարդկային տեսակը քարոզելու գործը միջոցներից մեկը նրանց տուն-թանգարաններն ունենալն է: Հայաստանում կան հայ մեծերի բազմաթիվ տուն-թանգարաններ, որոնցից է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը:

Հիմնադրվել է 1978-ին՝ հանճարեղ կոմպոզիտորի մահվան թվականին: Դեռ ողջության օրոք մաեստրոն բարեխառնություն ունեցավ իմանալու, որ իր համար տուն-թանգարան է կառուցվելու, ավելին՝ հնարավորություն ստացավ ծանոթանալու վերջինիս շենքի նախագծի էսքիզներին և տալու իր հավանությունը: Նախագծի ալբոմի տիտղոսաթերթի վրա Խաչատրյանը գրի է առել իր արժեքավոր մտքերն ու խորհուրդները, օրինակ, որ կցանկանար իր տուն-թանգարանն ունենար շատ լուսամուտներ, լինեի լուսավոր, ունենար համերգասրահ, ուր կհնչեի կենդանի երաժշտություն, մի խոսքով՝ լինեի իր ստեղծագործությունների նման արևառատ ու կենսալից մի կառույց, ավելի ճիշտ՝ լիարյուն կյանքով ապրող մշակութային օջախ: Խաչատրյանական գրառումներով այս նախագիծն էլ հենց դարձել է տուն-թանգարանի արխիվի առաջին ցուցանմուշը:

Տուն-թանգարանը ստեղծվել է այն առանձնատան հիման վրա (ճարտարապետ՝ Մարկ Գրիգորյան), որը 1947 թվականին Խաչատրյանին նվիրել էր Խորհրդային Հայաստանի կառավարությունը: Հիմնության նախագծի հեղինակը դարձյալ Մարկ Գրիգորյանն է, վերջինիս մահից հետո նախագծային աշխատանքներն ավարտին է հասցրել ճարտարապետ Էդուարդ Ալթունյանը: Տուն-թանգարանի անդրանիկ ցուցադրությունը բացվեց 1984 թվականի հունվարի 23-ին՝ ավաղ, առանց Խաչատրյանի:

Հաստատության հիմնադիր-տնօրենը երաժիշտ, խմբավար Գոհար Հարությունյանն էր. տնօրեն է եղել մինչև 2004 թվականը: Նրա օրոք են ձևավորվել տուն-թանգարանի ավանդույթները: Արդեն տիկին

գրքեր, հոդվածներ, հիշատակի նվիրումներ և այլն, որոնք ցուցադրվում են համակարգված՝ ըստ կոմպոզիտորի կյանքի ժամանակագրության և ստեղծագործության էվոլյուցիայի: Ցուցադրությունում առանձնահատուկ տեղ է հատկացված Սփյուռքին: Բազմակողմանիորեն ներկայացված են «Գայանե» և «Սպարտակ» բալետները: Կան նաև նվագավար Խաչատրյանին ներկայացնող, ինչպես նաև նրա մանկավարժական գործունեությունը լուսաբանող սրահներ: Հնչյունների հայազգի արձաններից մեկը ներկայացված է նաև իր ժամանակակիցների,



Հարությունյանի տնօրինության տարիներին Խաչատրյանի երևանյան օջախը դարձել էր սիրված անկյուն արվեստասեր հայաստանցիների և զբոսաշրջիկների համար, այստեղ նաև կազմակերպվում էին համերգներ, փառատոներ, ցուցադրություններ: 2004-ից տուն-թանգարանը ղեկավարում է երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, միջազգային մրցույթների դափնեկիր, Ա. Խաչատրյանի անվան տրիոյի դաշնակահարուհի Արմինե Գրիգորյանը, ով շարունակում է տասնամյակներով գոյություն ունեցող ավանդույթները՝ դարձնելով դրանք ավելի բազմազան, շարունակելով ի կատար ածել մեծ մաեստրոյի ցանկությունը, այն է՝ ունենալ աշխույժ մշակութային կառույց, ուր մշտապես հնչում է բարձրարժեք երաժշտություն:

Տուն-թանգարանի հավաքածուն ընդգրկում է ավելի քան 18 հազար թանգարանային առարկա: Մշտական ցուցադրության համար ընտրված են լուսանկարներ, փաստաթղթեր, ստեղծագործությունների ձեռագրեր, տարբեր հրատարակություններ, հեղինակային համերգների և բալետային ներկայացումների հայտագրեր, ծրագրեր, բուկլետներ, բեմական իրեր, հոբելյանական ուղեբժներ, դիպլոմներ, շքանշաններ, մրցանակների և կոչումների վկայագրեր,

քաղաքական-հասարակական գործիչների շրջապատում, իր ապրած ժամանակաշրջանի կարևոր քաղաքական և մշակութային իրադարձությունների կենտրոնում: Ցուցադրված են նաև Խաչատրյանի անվան հետ կապված դաշնամուրներ: Հուշատան ցուցադրությունը ներառում է կոմպոզիտորի դաշնամուրն ու անձնական իրերը: Գործում է նաև վիրտուալ ցուցադրություն:

2008 թվականին Խաչատրյանի ծննդյան 105-ամյակի առթիվ ամբողջովին փոխվեց, նորացվեց տուն-թանգարանի ցուցադրությունը: Առհասարակ մշտական ցուցադրությունը մշտապես փոփոխության է ենթարկվում՝ ավելանում են նոր ցուցանմուշներ: Անցյալ տարի ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ ի թիվս հայաստանյան մի շարք

թանգարանների Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում ևս տեղադրվեցին աուդիոգիդեր. անցյալ տարվանից այստեղ 10 լեզուներով ներկայացվում են 25 ցուցանմուշների պատմությունները:

Տուն-թանգարանում բնականաբար կա նաև ծայնադարան և համերգասրահ. ծայնագրությունների թիվը արդեն հասնում է 7000-ի: Կա նաև գրադարան:

Տուն-թանգարանում իրականացվող գիտաֆոնդային աշխատանքներն ուղղված են մեծ հայի կյանքի ու ստեղծագործության խորը ուսումնասիրությանը. արխիվային նյութերի հիման վրա կատարվել ու կատարվում են լուրջ գիտական ուսումնասիրություններ ինչպես հայ, այնպես էլ այլազգի խաչատրյանագետների կողմից: Կառույցն զբաղվում է նաև կոմպոզիտորին վերաբերող նյութերի հրատարակմամբ. լույս են տեսել Խաչատրյանի մամականիները. վերջինը՝ 2017 թվականի դեկտեմբերին (ներառում է 1928–1978 թվականներին գրված գրքեր բոլորը մամակները, որոնք կամ պահպանվում են տուն-թանգարանի ֆոնդում, կամ էլ որոնց մասին կան տեղեկություններ): Այս տարի ծրագրվում է լույս ընծայել նշված գրքի ռուսերեն թարգմանությունը: Բացի մամականիներից՝ տուն-թանգարանում տպագրվում են նաև բուկլետներ, ֆոտոալբոմներ, ծայնականավանկներ: Հաստատության արխիվը մշտապես համալրվում է նոր նյութերով:

2013 թվականին կոմպոզիտորի ծննդյան 110-ամյակի առթիվ կազմակերպվեց միջազգային գիտաժողով «Արամ Խաչատրյանը և ժամանակակից աշխարհը» խորագրով: Այս տարի հոկտեմբերին ևս նախատեսվում է կազմակերպել միջազգային գիտաժողով. մասնակցության հայտերի քանակը գերազանցում է նախորդ գիտաժողովի մասնակցության հայտերի քանակը, լինելու են բազմաթիվ հյուրեր արտերկրից:

Տուն-թանգարանում հաճախ տեղի են ունենում բազմաբնույթ միջոցառումներ՝ խաչատրյանական երեկոներ, փառատոներ, հուշ-երեկոներ, մրցույթներ, հանդիպումներ մշակույթի անվանի գործիչներ

ի հետ, ցուցահանդեսներ, հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների պրեմիերաներ և այլն: 2014 թվականի ավարտին, Ռուսաստանի Դաշնության Մ. Ի. Գլինկայի անվան երաժշտական մշակույթի համառուսաստանյան թանգարանային միավորման հետ կնքված համագործակցության պայմանագրի համաձայն, տուն-թանգարանում բացվեց ցուցադրություն՝ նվիրված Սերգեյ Ռախմանինովին և Ֆեոդոր Շալյապինին. ներկա էին ՀՀ նախագահը, Ռուսաստանի 10 ամենամշակավոր թանգարանների տնօրեններ և այլ պատվավոր հյուրեր: Իրականացվում են նաև կրթական ծրագրեր, ընդ որում ոչ միայն երեխաների, այլև մեծահասակների համար:

Այս տարի իրագործման են սպասում մի շարք հետաքրքիր գաղափարներ. բացի վերը արդեն նշված հոկտեմբերյան գիտաժողովից՝ լինելու են նորություններ մշտական ցուցադրությունում, նախատեսվում են հետաքրքիր մուլտիմեդիական լուծումներ, որոնցից է «Ծանփորդեմք Խաչատրյանի հետ» նախագիծը, և մի շարք ցուցադրություններ, օրինակ՝ առաջիկայում լինելու է ցուցադրություն «Արմենպրես»-ի հետ համատեղ. տարին հոբելյանական է նաև վերջինիս համար:

Տուն-թանգարանը պատրաստվում է ցուցադրություններ կազմակերպել նաև մի շարք այլ երկրներում, օրինակ՝ այս ապրիլին Մալթայում, որի մայրաքաղաք Վալետան հռչակվել է եվրոպայի 2018 թ. մշակութային մայրաքաղաք, բացվելու է «Երաժշտությունը որպես միջազգային լեզու» խորագրով ցուցադրությունը. ցուցադրություններ են նախատեսվում նաև այլ երկրներում: Այս տարվա ծրագրերից են Խաչատրյանի հոբելյանին նվիրված համերգները՝ դարձյալ Մալթայում. հայ մեծանուն կոմպոզիտորին նվիրված համերգով հանդես կգա Խաչատրյանի անվանակիր տրիոն: Մոտ օրերս Մոսկվայում կթողարկվի Արմինե Գրիգորյանի սկավառակը, որը ներառելու է Խաչատրյանի ստեղծագործություններից. սկավառակի թողարկման հովանավորն է բրիտանահայ գրող, լրագրող, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի և «Խաչատրյան տրիո»-ի լավ բարեկամներից ու հովանավորներից մեկը, մեծ հայրենասեր Ասատուր Գյուլեյանը:

Տուն-թանգարանում կա նաև հետաքրքիր հուշանվերային ցանկ, որը դարձյալ ժամանակ առ ժամանակ թարմացվում է, այցելուներին սպասում են նաև այլ անակնկալներ:

Տուն-թանգարանի յուրաքանչյուր անկյունում զգացվում է հանճարեղ կոմպոզիտորի տիրական ներկայությունը:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու



ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեխտա Դոլուխանյանի շուրջ 20-ամյա ջանադիր աշխատանքի արդյունք «Ֆրանսիացի հայագետներ (XIX-XX դարեր)» մենագրությունն իր բովանդակությամբ և հարցերի ընդգրկումը շրջանակով նախադեպը չունեցող աշխատանք է: Սեծածավալ այս ուսումնասիրությունը տպագրվել է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի օժանդակությամբ՝ ֆրանկոֆոնիայի 17-րդ միջազգային գագաթաժողովի շրջանակներում:

Հիմնելով «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը՝ Ա. Դոլուխանյանը մենագրություններով, հոդվածներով, ռադիո և հեռուստահաղորդումներում գիտական հանգամանալի մեկնաբանություններով



ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՐԸ.

ՖՐԱՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐ (XIX-XX դարեր), խմբագիր բան. գիտ. դոկտոր Անուշավան Զաքարյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018, 703 էջ

ներկայացրել է եվրոպական հայագիտության, թերևս, ամենածանրակշիռ մասի՝ ֆրանսիացի հայագետների գործունեությունը: Լույս են տեսել Ա. Դոլուխանյանի ուսումնասիրությունների գիտական նորությունը ու արժեքը ընդգծող հաղորդումներ և գրախոսություններ: Այս առումով ֆրանսիացի հայագետների գիտական վաստակն ամփոփող այս մենագրությունն սպասված էր:

Գրքում յոթ առանձին ծավալում բաժիններով և բազմաշյուղ ենթաբաժիններով դիտարկված են անցյալի և արդի անվանի հայագետներ Սեն-Մարտենի (1791-1832), Վիկտոր Լանգլուայի (1829-1869), Մարի Ֆելիսիտե Բրոսսեի (1802-1880), Էդուարդ Դյուլորիեի (1807-1881), Ֆրեդերիկ Մակլերի (1869-1938), Ֆրեդերիկ Ֆեյդի (1908-1991), Ժան-Պիեռ Մահեի (ծն. 1944 թ.) կյանքն ու գործը: Ամեն առանձին բաժին ունի օտարալեզու՝ ռուսերեն, ֆրանսերեն կամ անգլերեն, առաջաբան ու ամփոփում և գրականության հարուստ ցանկեր: Նորություն է Ա. Դոլուխանյանի անդրադարձը Ժան-Պիեռ Մահեի գիտական դիմանկարին, որը ներկայացված է «Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» գիտական նոր մեկնաբանում» և «Հայաստանի պատմական ճշմարտությունը ըստ Ամնի և Ժան-Պիեռ Մահեների» (ֆրանսերեն) խորագրերը կրող մասերում:

Օտարալեզու հայագետների երկերը հայերեն թարգմանել և դրանք հայագիտության տարբեր ճյուղերում ընդգրկելը ռազմավարական նշանակության խնդիրներ է լուծում և խիստ հրատապ է: Ֆրանսիացի հայագետների աշխատությունները հիմնականում հայերեն թարգմանված չեն. ներկայացվող մենագրությունը բնագրային զուգադիր թարգմանություններով, առանձին հայագետների ժառանգության կարևոր տեղիների հայերեն փոխադրություններով սկզբնաղբյուրի արժեք ունի և կարող է նոր պրպումների և թարգմանությունների սկիզբ դառնալ: Հայագիտության նվիրյալների կյանքի և գործունեության նկարագրությունը բնությունը հնարավորություն է տվել հեղինակին ներկայացնելու նաև հայ ժողովրդի կյանքի պատմաքաղաքական, մշակութային դրսևորումները որպես համաշխարհային քաղաքակրթության կարևոր մաս. սա՛ է բազմիցս ակնարկում Ա. Դոլուխանյանն իր մենագրություն մեջ, և սա՛ է նրան հատկապես հիացնում ֆրանսիական հայագիտության մեջ:

Ֆրանսիական հայագիտության հիմնադիր Սեն-Մարտենի ջանքերով քննության մյուս են դարձել հայագիտության համար կենսական կարևորություն ունեցող գրեթե բոլոր ճյուղերը՝ աղբյուրագիտություն, բնագրագիտություն, պատմագրություն, բանասիրություն, գրականություն, դրամագիտություն տոմարագիտություն, վիճագրություն, տեղագրություն և այլն:

Ա. Դոլուխանյանի ուսումնասիրություն

նը ցույց է տալիս, որ ֆրանսիական հայագիտությունը ինքնանպատակ չէր, այլ համակարգված մի դպրոց՝ աստիճանաբար ձևավորվող ավանդույթներով, խնդիրներով, ծրագրերով, որի սկզբնավորողը Սեն-Մարտենն է: Այս դպրոցի հաջողությունները պատմաքաղաքական գործունեության գաղափարները որպես գրոց լեզու մեծապես նպաստեց դրան) պայմանավորված էին նաև մի ներքին խթանով. դա սամերի կողմից ուսուցչի աշխատանքն ամեն կերպ ավարտին հասցնելու մղումն էր, որն ընդգծում է Ա. Դոլուխանյանը: «Ֆրանսիացի հայագետներ (XIX-XX դարեր)» աշխատությունը հնարավորություն է տալիս ֆրանսիական հայագիտական դպրոցը գնահատել իր զարգացման օրինաչափությունների մեջ:

Հայագիտության ակունքներում կանգնած ֆրանսիացի գիտնականները կարևորել են հայ ժողովրդի կյանքը, պատմությունը և մշակույթն ընդհանուր գծերով ներկայացնելը: Սենագրության մեջ ընդգրկված գրեթե բոլոր երախտավորներն ունեն հայ ժողովրդի պատմական դիմանկարն արտացոլող ուսումնասիրություններ. Սեն-Մարտենի «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» երկհատորյակը (Փարիզ, 1818-1819) բաց է անում Հայաստանի պատմական անցյալի դռները ողջ եվրոպայի առաջ: Այս աշխատությամբ Սեն-Մարտենը հիմնավորում է հայագիտության կարևորությունը Ֆրանսիայում: Վ. Լանգլուայի՝ Միլիթարյան միաբանությանը նվիրված աշխատությունը և գրքի երկրորդ մասը՝ «Ակնարկ Հայաստանի պատմության և գրականության» (Վենետիկ, 1869), Էդ. Դյուլորիեի «Հայերը» ուսումնասիրությունը ռուսերենով (Թիֆլիս, 1854), Ֆր. Մակլերի «Հայաստանի շուրջը» հոդվածների ժողովածուն (Փարիզ, 1917), «Կիլիկիայի շուրջը. Ջեթուն (Համառոտ պատմություն հայկական ազգագրության» հետազոտությունը («Journal Asiatique», no. 1), նոր ժամանակների հայագետներից Ժան-Պիեռ Մահեի «Հայաստանը դարերի ապացույց» (2001), «Հայաստանի պատմություն» (2012) աշխատությունները եվրոպացի ընթերցողի համար գիտականորեն հիմնավորում են՝ ո՞վ է հայը, ի՞նչ արժեքներ է կրելու այս ժողովուրդը, ի՞նչ միջավայրում է նա ստեղծագործել:

Հայ ժողովրդի մշակութային գանձերն աշխարհին ներկայացնելու և համաշխարհային պատմության ու մշակույթի մեջ հայ ժողովրդի դերն ընդգծելու լավագույն ուղին ֆրանսիացի հայագետները համարել են պատմական ստույգ աղբյուրների գիտական թարգմանությունները: Հայ պատմագրական ժառանգությունը մեծի մասամբ թարգմանված և ծանոթագրված է ֆրանսիական հայագետների կողմից, և նրանցից յուրաքանչյուրն իր մասն ունի այս շնորհակալ գործում:

Սեն-Մարտենի անկատար մնացած երազանքը՝ ունենալ հայ պատմիչների գրադարան, հետևողականորեն իրականացրին իր սաները՝ թարգմանելով և հրատարակելով թե՛ ուսուցչի անավարտ գործերը (Ստեփանոս Օրբելյանի Պատմության ֆրանսերեն ոչ ամբողջական թարգմանությունը լրացրեց Մ. Բրոսսեն), թե՛ նոր թարգմանություններ կատարելով: Վ. Լանգլուան հրատարակում է Գրիգոր Մագիստրոսի 83 թղթերը, 5-րդ դ. հայ պատմիչներին երկու հատորով, Սմբատ Գունդստաբլի և Միքայել Ասորու երկերը: Բրոսսեն ամենաբեղուն ու հաջողակն էր. նա հրատարակում է 13 ամուն պատմիչների երկեր՝ համապատասխան ծանոթագրություններով: Էդ. Դյուլորիեի երազանքը՝ հրատարակել հայ պատմիչներին 8 հատորով, ևս անկատար է մնում: Ժան-Պիեռ Մահեն թարգմանում է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը:

Ա. Դոլուխանյանը վերհանում է նաև

ֆրանսիացի հայագետների ուսումնասիրության մասնավոր, սակայն շատ կարևոր շրջանակները: Սեն-Մարտենի գիտական հետաքրքրություններն ընդգրկում էին հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը: Նա Արշակունի արքայական տոհմի պատմությունը քննելով՝ ցույց է տալիս, որ ամենաերկարակյացը հայ Արշակունիներն էին: Վ. Լանգլուան հայկական դրամների ուսումնասիրությամբ հիմնավորում է դրամագիտությունը Ֆրանսիայում: Այս գործը շարունակում է Բրոսսեն՝ ուսումնասիրության շրջանակ ընդգրկելով նաև վրացական դրամները: Վ. Լանգլուան իր ուշադրությունն ուղղում է դեպի Կիլիկյան Հայաստանի պատմությունն ու մշակույթը: Բոլորովին նոր խոսք էր հեղինակի՝ 13-14-րդ դդ. հայ դիվանագիտության պատմության ուրվագիծը, որն իր արդիականությունը չի կորցրել առ այսօր: Պատմամշակութային կապերի քննության առումով խիստ արդիական է նաև հայ ժողովրդի կյանքում խաչակիրների ունեցած դերի ճշգրտումը: Այդ հարցերին անդրադարձել է Էդ. Դյուլորիեն իր «Հավաքումն խաչակիրների պատմիչների, հայկական վավերագրեր» (Փարիզ, 1869) աշխատության մեջ: Ֆր. Մակլերը պատմամշակութային կապերի քննության համար կարևորում և ուսումնասիրության դաշտ է բերում հայ գաղթօջախների պատմությունը՝ հեղինակելով «Հայաստանը և Դրիմը» (Փարիզ, 1930) աշխատությունը: Ֆր. Ֆեյդին գործում է խական գիտական սխրանք՝ թարգմանելով «Սասունցի Դավիթ» էպոսը (Փարիզ, 1964), որին կցված գիտական ծանոթագրություններն ունեն առանձին մեծագրության արժեք և ցույց են տալիս Ֆեյդի բանագետի խորաթափանցությունն ու գիտական պաշարը: Ժան-Պիեռ Մահեն նորովի թարգմանում է Գրիգոր Նարեկացու համարները «Մատյան ողբերգության» երկը և գրողի աշխարհայայացը քննում բոլորովին նոր մոտեցմամբ:

Ֆրանսիական հայագիտական դպրոցն իր գործունեության հենց սկզբից առնչվել է միջնադարյան հայ մշակույթի թերևս ամենակարևոր հուշարձանի՝ հայ գրչագիր մատյանների հետ, որոնց հետ աշխատանքը պահանջում էր ձեռագրագիտական և աղբյուրագիտական հմտություններ: Փարիզի Ազգային գրադարանն ունեց հայերեն ձեռագրերի հավաքածու, իսկ հայագետներն անընդհատ կապի մեջ էին հայագիտական բոլոր հայտնի կենտրոնների հետ: Նրանք ստանում էին ձեռագրերի պատճեններ, կազմում ցանկեր, ընդօրինակում հիշատակարաններ՝ շրջանառության մեջ էին դնում ձեռագիր աղբյուրներից քաղած կարևոր տեղեկությունները՝ անմասն չմնալով նաև ձեռագրացուցակների կազմման աշխատանքներից: Այս գործի կարապետը Մարի Ֆելիստե Բրոսսեն էր Էջմիածնի գրատան

ռուսերեն-ֆրանսերեն երկլեզվյան ցուցակով (Ս. Պետերբուրգ, 1840): 1908 թ. Ֆ. Մակլերը կազմում է Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագրերի ցուցակ՝ առաջաբանով և ծանոթագրություններով: Ֆր. Ֆեյդին հմայիլների իր ուսումնասիրությանը զուգահեռ կազմում է նաև հմայիլների ձեռագրերի ցուցակ և դասակարգում դրանք:

Ֆրանսիացի հայագետները ճամփորդել են. նրանցից շատերը տեսել էին ճարտարապետական այն կառույցները՝ հատկապես վանքերն ու գրադարանները, եկեղեցիները, պատմական վայրերն ու ամմանց, որոնց մասին խոսում էին: Ա. Դոլուխանյանի աշխատությունն այս առումով ևս շահեկան նյութ է երևան հանում՝ ուղևորությունների արդյունք համդիսացող ամեն զեկույցի, հաղորդման կամ հրապարակման բնագիրը գրեթե հարազատորեն ներկայացնելով: Դրանք պարունակում են գիտական արժեք ունեցող տեղեկություններ և լրացնում այլ աղբյուրներից ունեցած մեր գիտելիքները: Ուշագրավ են հատկապես Բրոսսեի Հաղպատ և Սանահին վանքերին նվիրված և Ֆր. Մակլերի «Բաղեշի Աստվածամոր տաճարը» ուսումնասիրությունները: Այս աշխատությունները չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը և կարող են օգտակար լինել հայության կենտրոններին, միջնադարյան գործնառարարանների ուսումնասիրության գործում:

Կրթության գործն ու նրա գիտական հիմնավորման անհրաժեշտությունը չեն վրիպել Ֆր. Մակլերի, Ֆր. Ֆեյդի ուշադրությունից: Եվ դա պարզ է, քանի որ հայագիտական նոր սերնդին անհրաժեշտ էին հայերենին տիրապետող սաներ, ֆրանսիական հայագիտական դպրոցը պետք է լուծեր սերնդափոխության խնդիր ևս: Ֆր. Մակլերը հեղինակում է «Հայ գրականության քրեստոմատիան» (Փարիզ, 1932), Ֆր. Ֆեյդին՝ «Հայոց լեզվի դասագիրքը» (Փարիզ, 1969): 1912 թ. Փարիզում լույս է տեսնում Ֆր. Մակլերի դասախոսությունը՝ նվիրված արևելյան կենդանի լեզուների դպրոցի հայոց լեզվի ամբիոնի պատմությանը. սա միաժամանակ նաև ֆրանսիական հայագիտության ընթացքը ներկայացնող դասախոսություն էր: Նոր շրջանի հայագետները անմասն չէին նաև ժամանակակից հայոց պատմության և գրականության իրողությունները գնահատելուց. Ֆր. Մակլերը, Ֆր. Ֆեյդին և Ժան-Պիեռ Մահեն իրենց աշխատություններում դատապարտել են թուրքական հայաջինջ քաղաքականությունը Առաջին համաշխարհայինի և հետագա տարիներից, առանձին ուսումնասիրություններ նվիրել ևս. Արմյանի կյանքին և գործին, Երվանդ Օտյանին, Հակոբ Պարոնյանին:

Ալեխտա Դոլուխանյանի աշխատությունը վկայում է՝ ֆրանսիական հայագիտությունը հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը գնահատում է որպես համաշխարհային լուսավոր և հարուստ, սակայն Եվրոպային տակավին անհայտ մաս: Այդ մշակույթը դեռ ասելիք ունի և կարևոր է «մարդկության ընդհանուր պատմությունը» ճիշտ պատկերացնելու համար: Ներկայացվող մենագրությունը նաև Ա. Դոլուխանյանի մտորումների արդյունքն ու ամփոփումն է համաշխարհային պատմության մեջ հայ ժողովրդի ունեցած դերի վերաբերյալ: Սույ ունի թե՛ գիտական և ճանաչողական, թե՛ ազգային և քաղաքական արժեք:

Մարի Ֆելիստե Բրոսսենի տված Ա. Դոլուխանյանի գնահատականը բնութագրում է հենց ֆրանսիական հայագիտությունը. այն «շնչում է բարության, անցյալի նշանավոր գործիչների լավագույն գործերի գնահատմամբ, մարդկային դարավոր իմաստությունը պահպանելու մտահոգությամբ» (էջ 318):

«Ֆրանսիացի հայագետներ (XIX-XX դարեր)» աշխատությունը Ա. Դոլուխանյանի երախտագիտության տուրքն է հայ ժողովրդի մշակույթն ըստ արժանվույն և իրական փայլով ներկայացնող ֆրանսիացի հայագետների պայծառ սերնդին:

Լիլիթ ՀՈՎՍԵԾՅԱՆ

Խ. Արմյանի անվան հայկական պետական համալսարանի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ողջնետ



ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ ՄԵՐ ՀԱՆՃԱՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

Գարեգին Տեր-Հարությունյան, հայ պետական և ռազմական գործիչ, քաղաքագետ-իմաստասեր: Ծնվել է 1886 թվական հունվարի 1-ին հայոց Նախիջևան գավառի Կզնուտ (այժմ Գյումրի) գյուղում: Վախճանվել է 1955 թվականի դեկտեմբերի 21-ին Վլադիմիր քաղաքում:

Ապագան վրանգված ժողովուրդների վերջին խաղաթուղթը ՎԵՐԱԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է

Երկու բան պետք է լցնի մարդու հոգին հիացմունքով ու հարգանքով՝ աստղալից երկինքը՝ գլխի վերևում և բարոյական օրենքը՝ սրտի մեջ:

Ոմանք արևը միայն խավարման ժամանակ են նկատում:

Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի և մահվան առջև՝ հաղթական հայրենիք չի ունենա:

Չի կարելի օգնել այն ընկածին, ում պակասում է ինքնօգնությամբ ոտքի կանգնելու կամքը:

Միայն ազնիվն է զորավոր:

Հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ և կործանվում դրա պակասից:

Չկա հայրենասիրություն՝ չկա հոգևոր Հայրենիք: Եղածը լույ աշխարհագրական սահմաններն են:

Սոցիալապես որքան արդար, այնքան զորավոր է հայրենիքը:

Գերերջանիկ է այն մարդը, ով կարող է ասել՝ իմ հայրենիքում արևը ծագում է բոլորի և ամեն մեկի համար, այնտեղ երկիրը մշակելու և հոգեպես մշակվելու ազատություն ունեն ես:

Սիրե՞լ. սիրում են և՛ շուկան, ուր կարելի է շահել, սիրում են դրամը, հաճույքը, հարմարավետությունը, անցողական, սակավարժեք հազար ու մի բաներ: Իսկ Հայրենիքը, իբրև գերագույն արժեք, պատկանում է սրբազան այն առարկաների կարգին, որոնք պաշտվում են նաև: Սիրում ենք շատ բաներ, բայց արյուն չենք թափում նրանց համար: Հայրենիքը, սակայն, պահանջում է ոչ միայն մեր սիրտը, այլև մեր արյունը, և դա անհրաժեշտ է իր գոյության համար: Սերն ավելի իրավունք է ծանաչում, պաշտանունքը՝ պարտականություն:

Մի ժողովուրդ, որն իրեն պետք եղած ուժն իրենից դուրս է փնտրում, կուրորեն իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:

Բարոյական ուժն է զոտեպնդում փոքր ժողովուրդներին ու բանակներին անհավասար կռվում, նա է դեպի հաջողություն ու հաղթանակ առաջնորդում թվապես թույլերին՝ մեծ, մեծամեծ հակառակորդների դեմ:

Յուրաքանչյուր ազգի պարտականությունը մարդկության հանդեպ նախ և առաջ դրսևորվում է սեփական ազգի կենսունակության պահպանման և սեփական մշակույթի զարգացման ձևով:

Հայը պատճառ չունի կուսակցականամալու, հայը կուսակցականամալու նաև իրավունք չունի:

Ավելի լավ է հայ մարդը համր լինի, քան օտարախոս: Ես անչափ զարմանում եմ, երբ հանդիպում եմ անտաղանդ հայի:

Սիրում է նա, ով ուժեղ է, ով հոգու առատություն ունի, ում ուժի բաժակը լցված է հորդելու, թափվելու աստիճան:

Միայն նա է ճշմարտորեն մեծը, որը մեծ զավակն է նախ իր ժողովրդի և ապա՝ մարդկության:

Մահ չկա, մեռնում է փոքրոգին, մեռածն է մեռնում: Քաջերի հարությունն է մահը:

Ապստամբ ժողովրդին միայն Աստված կարող է հաղթել:

Ամեն հայ ընդունակ է մարտիրոսանալու, իսկ ամեն մարտիրոս կարող է հերոս լինել:

Այն օրից, ընթերցող, երբ հայը վախենալ սկսեց մահից, այն օրից օտարը թագավորեց Հայաստանում:

Արի է նա, ով իր մեջ սպանել է կաշվի համար դողացող անասունը:

Գոյությունը քարշ տալու համար մի՛ սողա, մի՛ ստորանա և մի՛ ստիր: Ստել՝ նշանակում է հայիոյել ճշմարիտը, ուրանալ՝ նշանակում է դադարել մարդ լինել:

Ազգերն ամենից շատ տառապել են և կտառապեն իրենց տականքների երեսից:

Գիտակից ստրուկի և հանցագործի միջև չկա տարբերություն: Խոնարհի ճակատող միայն իդեալիդ առաջ:

Աշխատիր առյուծի հետք թողնել ցեղիդ պատմության մեջ և բնավ մի մտածիր այն մասին, թե մի օր աղվեսը կարող է ապականություն փռել թողածդ հետքի վրա:

Շղթաների մեջ ծնվում, ապրում և մեռնում ես, դո՛ւ ես մեղավոր, որովհետև թույլ ես:

Կրոնների պես հայրենիքներն էլ պահանջում են, որ իրենց սպասարկողների ձեռքերը լինեն տաք և մաքրամաքուր:

Կեղծ է ամեն մի գրականություն, բարոյական ու քաղաքական վարդապետություն, որ ուժ և արիություն չի ներշնչում իր դավանողին:

Ով հեռանում է կրոնից, ամծնասպանորեն կտրում է իր հոգևոր զարկերակը: Մի օր հայությունը պիտի մերի թրքությանը, բայց ոչ ծունկի ելած նրա առջև, պարտվելուց հետո, այլ նրան ծնկի բերած՝ ծեծելուց հետո:

Սկզբից ի վեր հայությունն ու իր քրիստոնեությունը ծուլված են ի մի բնություն: Այս երկուսի ճակատագիրը նույնացած է:

Եթե կյանքի նպատակը հաճույքը համարեցիր, վախճանդ կորուստն է:

Նա, ով ընդունում է Աստծո գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականությանը՝ Ազգ, Հայրենիք, Պետություն:

Անկրոն էակը հրաշունչ զինվոր չի դառնա:

Ներքի, Տեր, եթե մի օր հայրենիքիս օգտակար լինելու համար մեղանչեմ Քո դեմ:

Քաջերին, միայն քաջերին է լսում ու զորավիգում պատերազմների ջմահաճ Աստվածը: Վախկոտներն իզուր են կանչում նրան: Խուլ է նա նրանց համար:

Նա է միշտ հաղթում, ով արդեն հաղթել է իրեն, այսինքն, ով իր մեջ մեռնելու չափ թուլացրել է մահվան երկյուղը:

Նրանք, ովքեր ծառայում են բարձր հայրենասիրությունից կամ փառասիրությունից դրդված, միայն նրանք են ավելացնում իրենց զենքի ու ցեղի փառքը: Հենց այնպես ծառայել, որովհետև պահանջում են կամ ստիպված ես մի զույգ ուսադիրներ կրել մի կտոր հացի համար, նշանակում է դատապարտված լինել կատարելու սովորական մահկանացուին հատուկ ամենամեղշան ու անփառունակ գործեր: Վա՛յ քեզ, բանակ, եթե նմաններով հարուստ են շարքերը:

Ունեցիր բոլոր մարտական առաքինությունները, բայց մի մոռանա, որ առաջինը, առանց որի պատերազմների ջմահաճ աստվածը քեզ քիչ անգամ կժպտա, դա խիզախությունն է:

Քեզ վրա նայիր որպես դատապարտվածի, որը հանուն իր երկրի ու ժողովրդի պաշտպանության պիտի միշտ պատրաստ լինի ընդունելու մահը:

Եղիր խիզախ, խստաբարո և չարքաշ: Հատկությունների այդ բարձր երրորդությունը կմոտեցնի կատարյալին:

Ամենք է առաջնորդի տգիտությունը, եսականությունը, նախանձը: Չի եղել ավելի զարհուրելի թույն, քան վատ օրինակը առաջնորդի, որ միշտ վարակիչ է: Եսակա՞ն է՝ անասնանում են նրա հետ առնչվողները: Ծո՛ւյլ է մտավորապես՝ հոգևոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները: Անհայրենապա՛շտ է՝ հակահայրենիք իրեշներ են վիստում նրա շուրջը: Իսկ եթե ա-

նարի է՝ զգալիորեն երկչուս են դառնում նրա իշխանությունը վայելողները:

Ազգերի հանճարը ստեղծագործ, իսկ նրա արտահայտությունը հորդաբուխ է լինում միայն բացարձակ անկախության մթնոլորտում: Ահա թե ինչու մարդկությանն ավելի օգտակար լինելու համար ժողովուրդները պիտի լինեն ինքնիշխանորեն ազատ և անկախ:

Անկախությունը, անկախ Հայրենիքն իրավունք լինելուց առաջ պարտականություն է, որից խուսափող ժողովուրդները կորցնում են իրենց բարոյական գոյության իրավունքը:

Չկա հրեշ, որ կարողանար գերազանցել անհայրենասերին, որ հոգեբանորեն անտարբեր է դեպի երկիրն ու ժողովուրդը:

Անհայրենասեր ժողովուրդը, եթե այսօր չէ, անհայրենիք կդառնա վաղը:

Անհայրենասեր ժողովուրդ, ասել է՝ անիդեալ և աննպատակ ժողովուրդ, որ իրենից ներկայացնում է մի տրցակ, բայց ոչ թե մի մարմին, «անհատների փո-



շի», բայց ոչ գրանիտե ժայռ, որպիսին պիտի լինեն ժողովուրդները՝ միջազգային արմատ փոթորիկներից պաշտպանվելու համար:

Հերիք է, որ մի ժողովուրդ դառնա անհայրենասեր, որպեսզի համարվի պատրաստի որս, և նրա երկիրը բաժանվի հարևանների միջև:

Ապագան վրանգված ժողովուրդը, ինչպիսին է մերը, նորանոր աղետներից խուսափելու համար մի հատիկ միջոց ունի՝ բարձր հայրենասիրությունը, այնպիսին, որով քաղցրանում են մեր թե՛ հավաքական, թե՛ անձնական ցավերը:

Հայրենասիրությունը ժողովուրդներին ներշնչում է առաքինություններ, որոնց շնորհիվ նրանք դառնում են և մնում ապահով ու հարգված:

Գիներանային հայրենասիրությունը, որ բավականին դավանողներ ունի մեր մեջ, այնքան էլ հեռու չէ անհայրենասիրությունից:

Դատապարտելի է նաև պայմանական հայրենասիրությունը: Հայրենիքը պետք է սիրել անկախ իր քաղաքական ռեժիմից, ինչպես նաև անկախ մեր քաղաքական հանգստությունից:

Երկար ու լուռ տքնությամբ մեռցնելու աստիճան թուլացրու քո մեջ մահվան վախը և դու չես մնա առանց փառքի, պատմությունից դուրս:

Ձորական, կռվիր այնպես, որ կարողանաս ասել զենքի ընկերներիդ՝ ինձ պես կռվեցեք:

Ահա և իմ վերջին խոսքը.

- Կուզեի աչքես փակել մի ահեղ ճակատամարտում, հաղթության թևերի վրա, զորքերիս գոռ աղաղակների մեջ: Սակայն ուր էլ և ինչպես էլ մեռնեմ, թող Սյունյաց իմ նախկին ռազմիկները Խուստուփ լեռան սրտի մեջ ամփոփեն իմ մի բուռ աճյունը:

Ուր և երբ էլ մեռնեմ, հավատա, իմ ազիզ ժողովուրդ, որ արտաքին վտանգներից ժամանակ իմ անհանգիստ հոգին այցի և օգնության պիտի փութա իր հայրենի աշխարհին և աներևութաբար քո բանակները առաջնորդի:

Զինվոր զավակդ՝ Նժդեհ, 1937 թ., Սոֆիա

ՅՆՅՈՏԻՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՐՈՒՍՏ ԿՅԱՆՔԻ ՀԱՄՆԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.

Քըրք Քըրքորյանի մասին պատմող «Խաղացողը» գիրքն արդեն գրախանութներում

Ամերիկայի Միացյալ Նահանգներում լույս տեսած և արդեն իսկ բեսթ-սելեր դարձած ամերիկահայ գործարար, միլիարդատեր, բարերար, Հայաստանի ազգային հերոս Քըրք Քըրքորյանի մասին պատմող «Խաղացողը» գիրքն հայերեն լեզվով արդեն հնարավորություն ունի կարդալու հայ հանրությունը: Գրքի հեղինակը Ուիլյամ Չ. Ռեմֆելդն է, իսկ թարգմանիչները՝ Ալինա և Աննա Միրզոյանները:

«Խաղացողը. թե ինչպես անփող, բերուս Քըրք Քըրքորյանը դարձավ կապիտալիստական պատմության խոշորագույն գործարարը» գրքի անգլերեն տարբերակը լույս է տեսել 2018 թ. հունվարի 23-ին:

«Քըրք Քըրքորյանը շատ փակ մարդ էր, հարցազրույցներ չէր տալիս, հանրության առաջ ելույթ չէր ունենում: Նա իր անձնական կյանքի պահպանումն ամեն ինչից վեր է դասել: Քըրքորյանի խորհրդատուներն ու գործընկերները կարծում էին, որ անգամ միայն մահից հետո պետք է պահպանել մեկուսացվածությունը, սակայն Ռեմֆելդին հաջողվել է բացառություններ գտնել»:

Քըրք Քըրքորյանը Ամերիկայի առա-



ջամարտիկ օդաչուներից էր, կինոմագնատ, ռիսկի սիրահար և գործարար աշխարհի հսկաներից, որը դարձավ երկրի խոշոր ֆինանսիստներից մեկը: Նրա կյանքի պատմությունն արտացոլում է Առաջին աշխարհամարտի օդաչուի սառնասիրտ համարձակությունը, կռվարար բռնցքամարտիկի հաստատակամությունը, խորհրդավոր, անընթեռնելի խաղացողի խորամանկությունը և գործարքների անզուգական հան-

ճարը: Թեև նա երբեք թույլ չի տվել, որ իր անունը փակցնեն որևէ շենքի վրա, 2015 թվականին, երբ նա մահացավ, նրան էր պատկանում Լաս Վեգասի ամենախոշոր հյուրանոցների ու խաղատների մեծ մասը:

Այս հափշտակող կենսագրականի մեջ հետաքննող լրագրող Ուիլյամ Չ. Ռեմֆելդը, խորամուկ լինելով Քըրքոր-

յանի երկար ժամանակ գաղտնի պահված կյանքի պատմության մեջ, ներկայացնում է հակասություններով լի մի մարդու՝ թերի կրթությամբ, սակայն գործարքների հանճարեղ վարպետի, անչափ ամաչկոտ մի մարդու, որն ամենահամարձակ ու հանդուգն բիզնես մախաձեռնությունների հեղինակ էր, զգուշավոր և ամեն ինչ մանրամասն հաշվարկող ներդրող, որը պատրաստ էր ամեն ինչ դնել խաղասեղանին: «Խաղացողը» լույս է սփռում ամեն ինչին ինքնուրույն հասած այս սակավաճանաչ ձեռնարկատիրոջ ոգեշնչող պատմության վրա:

Գրքի շնորհանդեսները մեկնարկեցին մարգերում՝ առաջինը Գյումրիում, ապա Վանաձորում, մյուս կանգառը եղավ Կապանում:

«Մարզային շնորհանդեսների մպատակն է ոչ միայն գիրքը ներկայացնել տեղի բնակիչներին և պատմել, թե ով է եղել Քըրք Քըրքորյանը, այլև ակտիվացնել մարզաբնակների մշակութային առօրյան», - նշեց «Էդիթ Պրինտ» հրատարակչության ներկայացուցիչ Շավարշ Կարապետյանը:

Ի դեպ, «Խաղացողը» գրքի երևանյան շնորհանդեսը «ՔըրքԱրշավի» շրջանակում տեղի ունեցավ սեպտեմբերի 10-ին, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի Քըրք Քըրքորյանի անվան դահլիճում: Գիրքը հայ ընթերցողին է ներկայացվում «Էդիթ Պրինտ» հրատարակչության նախաձեռնությամբ:

Մանանա ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

Ծովային հսկա

Մեր մոլորակի պատմության եղբրը թերթելիս, հանդիպում ենք մի այնպիսի դարաշրջանի, երբ կենդանիները հանդես են եկել հսկա սողունների ձևով: Այդ շրջանում սողունների մեջ իր մեծությամբ և հատկապես երկարությամբ հայտնի է եղել հրեշավոր մողես դիպլոդոկը: Նա ապրել է ոչ խորը լճերում և ճահիճներում, սնվել է հյութալի բույսերով: Նա ունեցել է 40-50 տոննա քաշ և 25 մետր երկարություն, որից 17-ը եղել է միայն պարանոցն ու պոչը: Հսկա խոտակերի ոտքերը եղել են հաստ և կարծ, իսկ գլուխը փոքրիկ:

Այդ հսկա սողունների գոյության դարաշրջանից միլիոնավոր տարիներ հետո (89 մլն տարի), մենք հանդիպում ենք մի այնպիսի հսկայի, որի մարմնի երկարությունը ոչ թե 20-25, այլ 33 մ է, իսկ քաշը 40-ի փոխարեն 150 տ դա կապույտ կետն է: Նա մեծ մասամբ տարածված է հարավային կիսագնդի ջրերում, երբեմն էլ հանդես է գալիս մեր կիսագնդի հյուսիսային շրջաններում:

Կենդանու երկարությունը 33 մ է: Կողք-կողքի առնվազն 175 մարդ պետք է կանգնած լինի, որպեսզի շրջապատի այդ հսկա կենդանուն: Մեզանից յուրաքանչյուրն այդպիսի հսկայի մոտ կերևա այնչափ, որչափ մեզ մոտ կերևա փոքրիկ ճնճղուկը: Կապույտ կետը կշռում է 150.000 կգ, այսինքն այնքան, որքան կկշռի միջին քաշի 2700 մարդ միասին, կամ 40 փիղ: Կապույտ կետի բերանի մեջ կարող են երկու տասնյակից ավելի մարդիկ ազատ մտնել և մույնիսկ իրար չդիպել, բայց նա մարդուն կուլ տալ չի կարող: Հակառակ իր ահռելի մարմնին ու հսկայական բերանին, նա ունի փոքր կլան և նեղ կերակրափող, որից ներս են ահիում միայն փոքրիկ փափկամարմինները, իսկ այդ գործին օժանդակում է նրա 3000 կիլոգրամանոց լեզուն: Նրա մեջքին կա մեկ ոչ մեծ լողակ, իսկ փորի վրա՝ 88 ծալքեր: Բերանի միջի թիթեղները (թեխերը) սև են, ծոպերը կոշտ և նմանվում են ձիու մազին: Թիթեղների թիվը բերանի յուրաքանչյուր կողմում հասնում է 360-ի, որոնք ունեն մինչև 90 սմ երկարություն: Կապույտ կետի համեմատաբար մանր աչքերը գտնվում են բերանի անկյունային մասում:

Կապույտ կետը ձկներով երբեք չի սնվում: Օվկիանոսի ջրերում շատ կան խեցգետիններ ու փափկամարմիններ, որոնք էլ հանդիսանում են նրա սիրելի կերը: Կապույտ կետը մեկ օրում կուլ է տալիս 1,5-2 տ մանր խեցգետնակերպեր, ձագ ունենալու դեպքում՝ մույնիսկ 4-5 տ: Այդքան կերն անցնելով նրա նեղ կերակրափողով, լցվում է 3000 և տարողությամբ եռաքաժին ստամոքսը, որի երկարությունը հասնում է 3 մ: Ստամոքսից կերն անցնում է 240 մ երկարություն ունեցող աղիների մեջ: Սննդի մարսելուն նպաստում է 1000 կիլոգրամանոց ենթաստամոքսային գեղձի ծորաններից հոսող հյուսիքը:

Կապույտ կետն ունի 8000 և արյուն: Արյան այդ հսկայական քանակը շրջանառության մեջ է դնում 700 կիլոգրամանոց սիրտը:

Ընդհանրապես բոլոր կետերը բազմանում են բաց ջրերում և տարվա այն ամիսներին, երբ հյուսիսային կամ հարավային կիսագնդում լինում է ձմեռ: Նրանք շարժվում են դեպի հասարակած, հավերժական տաքության շրջանը: Ծնվելուց հետո մայր կապույտ կետն իր «փոքրիկին» 7 ամիս սնում է կաթով: Պատկերացրեք, ինչքան կաթ պետք է ունենա մայրն իր կաթնագեղձերում, որպեսզի 6-8 մետրանոց և 3 տոննա քաշ ունեցող ձագին բավարարի: Հաշվված է, որ կապույտ կետի կաթնագեղձերը օրական արտադրում են 300 և կաթ, որի յուղայնությունը կազմում է 40 տոկոս, այն դեպքում, երբ ամենալավ կովի կաթի յուղայնությունը հասնում է 5 տոկոսի:

Կենսաբժշկության զարգացման հարցերին նվիրված կլոր սեղան ՀՀ ԳԱԱ-ում

Սույն թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ ԳԱԱ նախագահության միստերի դահլիճում կայացավ կլոր սեղան՝ նվիրված Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կենսաբժշկության ոլորտում համագործակցության զարգացման հարցերին:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Շուբուրյանը: «Կենսաբժշկական ուսումնասիրությունները ՌԳԱ-ում» թեմայով զեկուցում ներկայացրեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս, մանուկենաստեխնոլոգիայի, իմունաքիմիայի և նյարդային համակարգի կենսաքիմիայի հայտնի մասնագետ Վլադիմիր Չեխոմինը: «Կենսաբժշկական ուսումնասիրությունները ԳԱԱ-ում» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը:

Կլոր սեղանի շրջանակներում քննարկվեցին բժշկության մեջ կիրառվող մանուկենաստեխնոլոգիայի, կենսաբանական մոդելների, գենոմիկայի և կենսաինֆորմատիկայի վերաբերյալ հարցեր:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Երևանում կայացավ Եվրամիության «Հորիզոն-2020» ծրագրին նվիրված տեղեկատվական օր

Միջոցառման նպատակն էր ներկայացնել «Հորիզոն-2020» ծրագրի Twinning և ERA Chair ենթաօրագրերը, որոնք Հայաստանի ասոցացման կարգավիճակից բխող մասնակցության լրացուցիչ հնարավորություններից են: Նախագծերի շնորհիվ հնարավորություն կլինի ավելի սերտ համագործակցություն հաստատել եվրոպական առաջատար գիտահետազոտական կենտրոնների հետ հեռանկարային գիտական ուղղություններում, ինչպես նաև իրականացնել բարեփոխումներ և կառուցվածքային փոփոխություններ՝ համաշխարհային համբավ ունեցող արտասահմանյան գիտնականների ներգրավմամբ:

Միջոցառմանը մասնակցում էին փորձագետներ Կիպրոսից և Լեհաստանից, որոնք ներկայացրեցին «Հորիզոն-2020» ծրագրի Twinning և ERA Chair ենթաօրագրերի այս երկրների փորձը: Սեպտեմբերի 14-ին գիտնականների համար անցկացվեց սեմինար՝ «Ինչպես գրել հաջող նախագծեր» թեմայով:

Միջոցառումը կազմակերպվում էր ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասնակցությամբ ԵՄ «Հորիզոն-2020» ծրագրի «Գիտության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտում համագործակցության ցանց Արևելյան գործընկերության երկրների համար պլուս» (EaP Plus Project) նախագծի շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 26.09.2018 թ.:

"ГИТЮТЮН" ("Hayka") газета НАН РА